

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

50^{րդ} ՏԱՐԻ, ԹԻԻ 2

(ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ)

13 ՅՈՒՆՈՒԱՐ 1901

Մասիս շաբաթների սարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար ՔԱՌԱՍՈՒՆ ղրգ. եւ գաւառներուն համար ՅԻՍՈՒՆ ղրգ., կանխիկ վճարելի : Արտասահման 12 Գրանի կամ 5 բուլլի : Թղթաստրական ծախսը խաբարութեան վրայ է : Վեցամսեայ կամ 1/2-նամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկէն :

Մասիս հրապարակելիք ամէն շաբաթ առտու, եւ կը գտնուի Բերայի բոլոր ծխա-վանառներուն ու Պահչե-Գաբուի ջրավանառներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալա-թիոյ, բոլոր արուարձաններու լրագրավանառներուն հոյ :

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

ՀԱՍՅԻ

دوعليده غلطهده «مأسيس» غزنهسى ادارهسى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ» Ի

Կ. Պոլիս, Ղաղարիս, Նորաստանկեան խան

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ԻԻՆԻՕՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂ

Մինչև 1899ի վերջը հատուցեալ շահաք	240.000.000 Փր.
1899ին գանձուած ապահովագին	19.500.000 »
Գրամագլուխ եւ պահեստ	105.000 000 »
Ապահովագրեալ գրամագլուխ	18.000.000.000 »

ԿԵՆԱՑ ՃԻՒՂ

Մինչև 1889ի վերջը հատուցեալ շահաք	99 000.000 Փր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253.000.000 »
Գրամագլուխ եւ պահեստք	150.000.000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիօն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը **ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՁԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՍԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ.**

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց գեղչեալ գիներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Ծանոթաժիններու տարրէ ատրի անմիջական վճարում, որով Իւնիօնի ապահովագրողք **ՉԵՐԾ** են այն վնասներէն եւ լուսախաբուրքիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բուրդման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան գրամատունն է **ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԺԱՆ**

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս, Կալքաք, Թահսապուրուն խան, Օսմ. Պանֆայիմ դիւանը

Գործակալութիւնը Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Պ. ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏԱՆ

Կ. Պոլիս. Չափմանքլար Եօզուու, Թիւ 20

1. ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ — Հեղինակ Մարի Պոնտացի-Գին 4 զրչ.

2. ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ — Հեղինակ Մարի Պոնտացի-Գին 4 զրչ.

Սրբազան Պատմութեան այս երկու գառազրքերը կը գերազանցեն իրենց բոլոր նախորդները, կէտ առ կէտ յառաջ բերած են Ս. Գրոց բոլոր պատմութիւնները պարզելով զանոնք հասկնալի ընելու նպատակով եւ այսպէս բարոյական դաստիարակութեան գեղեցիկ սկզբունքներ ներշնչելով մատաղ իմացականութեան:

3. ԲԵՐԱԿԱՆ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆ (Պատկերազարդ) հեղինակ Միխիլար Պոնտացի-Գին 5 զրչ. Մանկավարժական նորագոյն մեթոտներու, եւ ի մասնաւորի գերմանական ամենանոր ընթերցարաններու հետեւողութեամբ պատրաստուած ուղի գառազրքը, մեր բազմաթիւ ընթերցարաններու մէջ առաջին տեղը զբաւած է:

Վերոյիշեալ երկք գառազրքերը, իրենց նորագոյն մեթոտներուն շնորհիւ, քիչ ժամանակի մէջ մեծ ընդունելութիւն գտած են բազմաթիւ Ազգ. վարժարաններուն մէջ, հետեւաբար ջերմապէս կը յանձնարարուի անոնց գործածութիւնը ամէն անոնց որոնք տակաւին չեն տեսած այս կարեւոր գործերը:

ՄԱՍԻՆ

50^{րդ} ՏԱՐԻ

— 13 ՅՈՒՆՈՒԱՐ 1901 —

ԹԻՒ 2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գրագետն ու հասարակութիւնը (Տիկին Տիւսարի մահուան առթիւ). ՄԷՐՍԷՏԷՍ. — Բանաստեղծութիւններ. Վառարանք. Գ. ԶՕՀՐԱՊ. — Սէր. ԱՂԵՔՍ. ՓԱՆՈՍԵԱՆ. — Մարած ձայներ. (Վերջացող դարուն սեմին վրայ). Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ. — Բարիգիտան կեանքէն. (Աղքատները Ծնունդի Տօնին. — Տորթ. Բոթէն) Ն. — Անտեսուած գործը. ՍՏ. ՄԽԻԹԱՐԵԱՆ. — Օրուան մահերը. Տ. Ա. — Յուշատետր:

ԳՐԱԳԵՏՆ ՈՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

(ՏԻԿԻՆ ՏԻՒՍԱՐԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻՒ)

Ա.

Յարգանքի ու վշտի այն արտայայտութիւններէն ետքը՝ որոնք քիչ մը ամէն գրասէր մարդու կողմէ յայտնուեցան Տիկին Սըր-րուհի Տիւսարի մահուան առթիւ, շատեր տեսակ մը ցաւագին խորհրդածութեամբ շեշտել ուզեցին սա պարագան թէ կին մը՝ որ խնայական բաւական գնահատելի կարողութեամբ մը օժտուած էր, թէ կին մը՝ որ կատարեալ ըլլալու աստիճան բարձր ու բազմակողմանի զարգացում մը ստացած էր, եւ թէ վերջապէս կին մը՝ որ արդէն իսկ քանի մը կտոր գիրքերու հրատարակութեամբ բեղուն ու գեղեցիկ տաղանդի մը նշանները ցոյց տուած էր, իր ցեղին գրականութեան չտուաւ այն բանը զոր այդչափ երեւոյթներու հանդէպ գտնուող հասարակութիւն մը իրաւունք ունէր իրմէ սպասելու:

Իրողութիւնը բացարձակապէս ճշմարիտ է, եւ այն աստիճան՝ որ կարելի չէ անկէ աւելի ճիշտ բան մը երեւակայել, լայց միւս կողմէ ալ անկարելի է մտարբերել բան մը այնքան անհեթեթ ու անիրաւ՝ որքան այդ իրաւունքի տեսակէտը՝ զոր շատեր կ'ուզեն յուզել:

Մեկուսացնելով Տիկին Տիւսարի պարագան, եւ խնդիրը դառնելով իր ամբողջութեան մէջ, պիտի տեսնենք որ այդ իրաւունքը՝ զոր ունենալը յաւակնին ոմանք, երեւակայութիւնք ամէնէն մեծ անբարոյակա-նութիւններէն մէկն է ինքնին: Թէ մեր հասարակութիւնը կրնայ եղբր պահանջկատ ըլլալ իր ո՛ր եւ է մէկ գրչի աշխատաւորին նըկատմամբ, թէ մեր հասարակութիւնը կրնայ իրաւունք մը ունենալ եղբր անոնցմէ որոշ աշխատութիւն մը, սահմանաւոր ու կուռ գործ մը ակնկալելու, ըսէ՛ք, կա՞յ ասկէ աւելի անամօթ մտածում մը: Ե՞րբ արդեօք այդ միեւնոյն հասարակութիւնը, — զոր տարօրինակութեանց ամէնէն ապօքուցելովը ու մանաւանդ ընդվզեցուցիչովը «ազնիւ» տխրոսով կ'որակեն, — ուզած է աչքի առջեւ բերել այն կեանքը՝ զոր գրող մը պիտի ունենար՝ եթէ երբեք խենթութիւնը ընէր ինքզինքը բոլորովին գրականութեան նուիրելու: Եւ եթէ երբեք աչքի առջեւ ալ բերած է այդ կեանքը, ե՞րբ արդեօք վայրկեան մը կամ երկուք ուզած է խորհրդածել անոր վրայ: Կեանք . . . Ի՛նչ ահաւելի հեգնութիւն այդ

«հայ գրագէտի կեանք»ը . . . Ընտրել աս պարէզ մը՝ որ ամէն բանէ առաջ սրտի ու մտքի ամենակատարեալ հանգստութիւն, կանոնաւոր կեանք եւ առողջ վիճակ մը կը պահանջէ, եւ այդ ասպարէզին իսկ պատճառաւ շարունակ խռովուած գտնել իր միտքն ու սիրտը, դատապարտուիլ ամէնէն անկաշուն ու քաջքուկ կեանքերէն մէկը ապրելու, եւ ամէն մէկ վայրկեան հիւանդութեան մը վախով մրկուիլ. — աս չէ՞ ինքնին այդ համալուար «հայ գրագէտի կեանք»ը՝ սրուն ապուշներու երամ մը, — մասնաւորաբար գաւառներէն, — կը բաղձայ շարունակ, եւ որուն ուրիշ ո՛չ նուազ նշանաւոր ապուշներ կը նախանձին իսկ, չեմ գիտեր ի՞նչ փառք տեսնելով անոր մէջ :

* * *

Եւ ինչո՞ւ համար այդ կեանքը. — Ապա-հովարար այն մարդը որ ինքզինքը բոլորովին գրականութեան նուիրելու չափ յիմար պիտի ըլլար, միլիոնաւոր մը ըլլալու յոյսէն չէ՞ որ պիտի հրապուրուէր : Այդ կեանքը իրեն դրամ չի կրնար բերել բնաւ. հակառակ սրտին ու մտքին խռովքին՝ որ ընդհանուր պէս ասոր անոր եղած պարտքէ մը եւ կամ՝ — տիտո՛ւր իրականութիւն, — նպարավաճառին ու հացագործին անվճար մնացած հաշուեցուցակէն կը ծնի, ենթադրենք որ կարենար յաղթել ինք իր անձին, կարենար վանել սիրտը ճիշդ բոլոր տխուր մտածումները, եւ խաբուսիկ ու դառն զուարթութեամբ մը համակուած՝ յաջողէր երես ճերմկցնելիք բան մը արտադրել. ի՞նչ պիտի ըլլար ստանալիք փոխարինութիւնը : Նախաճաշ չըրած, եւ գիշերուան անքնութեան բոլոր հետքերը դէմքին վրայ՝ ձեռագիրը գրպանը դնելով փողոց պիտի խնար անշուշտ՝ խմբագրութեան մը դուռը ափ առնելու համար :

Ա՛խ, այդ մուտքը. հաւատացէք որ երեւակայութիւնք ամէնէն յուսահատ, ամէնէն գեղնաքարշ, ամէնէն գլխիկոր ու խռովուն մուտքերէն մէկը պիտի ըլլար : Անգամ մը դրան սեմը անցնելէն ետքը պիտի տեսնէիք գողգոջուն ձեռք մը՝ որ ծալուած յողուածը պիտի երկարէր թերթին Տնօրէնին, կատարուած աշ-

խատութեան մը փոխարէն ողորմութիւն խնդրողի դէմքով մը : Ու Տնօրէն Էֆէնտին, — որ ամէն պարագայի մէջ «ազնիւ» ու «պատուարժան» ըլլալէ չի դադրիր. — անուշ ու քաջալերիչ դէմքով մը պիտի սոնէր յողուածը, ուշադրութեամբ պիտի կարգար զայն, եւ հարիւրին հարիւր պիտի պատասխանէր .

— Բոլոր շնորհաւորութիւններս, կարելի չէ ա՛յս աստիճան սքանչելի ու կատարեալ յողուած մը երեւակայել, վաղն իսկ կը հրատարակուի :

Ու մինչդեռ ներկայացողը ինչպէ՞ս ընելով դրամի խնդիրը յուզելուն վրայ պիտի մտածէր, պատուարժան Տնօրէն Էֆէնտին, գուշակելով հանդերձ խեղճին մտքէն անցածը, պիտի աւելցնէր կատարեալ cynismeով .

— Միայն թէ պէտք չէ՛ կանգ առնել առաջին յաջողութեան մը հանդէպ. գրեցէ՛ք միշտ ասանկ աղուոր բաներ ու մեր սինակները ամէն տոբն ձեր արամադրութեան տակ պիտի ունենաք :

— Բայց . . .

— Բայց ի՞նչ :

— Վերջապէս, Էֆէնտին, մենք ալ պիտի ապրինք . . .

— Օ՛հ, անշուշտ, իրատենք ունիք, ամէն մարդ պէտք է ապրի, ամէն մարդ պէտք է ուտէ. այո՛, իրատենք ունիք :

— Չհասկցաք ըստծո՛ւ :

— Ի՞նչ կ'ուզէիք ըսել :

— Այսինքն պզտիկ վարձատրութիւն մը պիտի խնդրէի :

Ու պատուարժան Տնօրէն Էֆէնտին, որ արդէն իսկ կը սպասէր ատոր, պիտի պատասխանէր միշտ նոյն cynismeով, թէ եւ այս անգամ տխուր ու վշտաբեկ երեւոյթ մը տուած դէմքին .

— Սակայն, բարեկամս, ինչպէ՞ս կ'ուզէք որ վճարենք ձեզի : Մենք իսկ միշտ բացով կ'եղենք գործին մէջէն. աս հասարակութիւնը ասանկ է արդէն. բնաւ չգիտեր նիւթապէս քաջալերել ո՛ր եւ է մաքրի աշխատաւոր մը :

— . . .

— Ի՞նչ ընես, տխուր է, բայց վերջապէս խոսքով ինչն ալ է, Եֆէնտին, յողուած նիդ սիրով կը հրատարակենք, բայց դրամ . . . ատիկա չենք կրնար :

—Այդ պարագային մէջ . . .

—Բայց կրնանք բան մը ընել . ընկալագիր մը ունինք այս ինչ անձին վրայ , 40 զրուշի ընկալագիր մը՝ զոր չորս ու կէս տարիէ ի վեր չենք կրցած գանձել՝ հակառակ ըրած դիմումներնուս . ուրիշ երկու յօդուած ալ կը բերէք , եւ երեքին փոխարէն կ'ընդունիք այդ ընկալագիրը՝ որ վերջապէս բաւական գումար մըն է ինքնին :

Կ'երեւակայէք կարծեմ իսեղճ հայ գրագէտին գէմքը :

Ընդհանրապէս աս է գտնելիք փոխարինութիւնը . ու եթէ երբեք բաղդն ալ ունենայ դրամ տալու տրամադիր Տնօրէն էֆէնտի մը գտնելու , — անշուշտ միշտ «ազնիւ» ու «պատուարժան» տեսակէն , — հարիւրին հարիւր ու կէս՝ երեք կամ չորս յօդուածի փոխարէն մէկ-երկու մէճիտի ուղարկելի գումար մը պիտի ըլլայ ստացածը :

* * *

Պիտի առարկուի սակայն թէ նիւթական վարձատրութենէն դուրս կայ բարոյական վարձատրութիւն մը՝ որ ինքնին ոսկի ու ագամանդ կ'արժէ եւ զոր ձեռք բերելու համար ասպարէզները մատով չէ՝ որ կը համբուին . ու եթէ չեմ սխալիր , այդ բարոյական վարձատրութեան մէջն իսկ շատեր կը տեսնեն այն փառքի տեսակէտը որ գրագէտի կեանքին բաղձալու կը մղէ զիրենք :

Թողով ադ բարոյական վարձատրութեան դրական արժէքը՝ որ նիւթականին ընկերացած չըլլաով չի կրնար մեծ արժէք մը ցուցնել , — քանի որ կարծեմ նոյն իսկ Հրատ Մոլորակին մէջն իսկ անօթի փոր մը երբեք գովեստով չի կրնար կշտանալ , — անոր գաղափարային արժէքն ալ մեր մէջ չունի բնաւ այն հանգամանքը զոր սէ'տք է որ ունենար :

Ի՞նչ է մեր մէջ գրագէտի մը համար բարոյական վարձատրութիւնը ըստօրէն . — աշխատութեան մը բարոյական գնահատումը , աշխատութեան մը մասին տրուած աւելի կամ նուազ հիմնաւոր գովեստ մը , անտնի չէ՞ : Արդ , այս ձեւով յայտնուած ո՛ր եւ է հասկնալիք , դժբաղդաբար՝ մեր մէջ մասնաւորուած է նիւթային գրատէքներու ցանցաւ չըր-

ջանակի մը գոգը , կազմուած գլխաւորաբար պաշտօնակիցներէ կամ բարեկամներէ , սրտեք օրուան յօդուածի մը առթիւ իրաւ է որ չեն թերանար հեղինակը շնորհաւորելու պարտաւորութեան մէջ , բայց գրեթէ միշտ մասնաւոր հաշիւ մը , երբեմն նոյն իսկ նախանձ պակաս չըլլար իրենց յայտնած գովեստներուն սակ : Շատ քիչ անգամ , եւ շատ քիչ մարդոց համար անկեղծ կրնայ ըլլալ այդ համակրութիւնը . կամ բարեկամ մըն է՝ որ բարեկամի մը խաթերն համար գովեստի երկու բառ կը ծամծամէ , կամ քծնող մըն է որ իր խառնուածքին պահանջումը գոհացնելու համար՝ քոսոտ սողոսկումներու մէջ մշտնջենական խուռնի մը կը ծխէ , կամ նախանձոտ մը՝ որ տրուած force գովեստի մը առթիւ չի մոռնար չար , աղտոտ քաջքուք մին ալ քշել , եւ կամ քննադատութեան արհաւիրքէն բըռնուած ցած ոչնչութիւն մը՝ որ քիչ շատ ոյժ ունեցող գրողի մը փէշէն չրթունքները բնաւ չբաժնելու չափ վատ կ'ըլլայ գրեթէ միշտ :

Եւ սակայն , ճշմարիտ գրողին համար բարոյական վարձատրութիւնը աստ չէ՝ որ պիտի ըլլար , այդ աւելի կամ նուազ աղտոտ հաշիւներով տրուած գովեստները չէ՝ որ իրեն մոռցնել պիտի տային այն նիւթական անհատումը զրկանքները , որոնց ամէն օր կրնայ ենթարկուիլ իր ընտրած ապերախտ ասպարէզին երեսէն , Բուն բարոյական վարձատրութիւնն է , համակրութիւնը նոյն իսկ ժողովրդային տարրին՝ ինչ որ մեզի համար գոյութիւն չէ ունեցած մինչեւ այսօր : Ամբողջ Ժողովուրդի մը համար գրել , սա աղուորիկ երազով օրօրուիլ թէ բովանդակ հասարակութեան մը մեծն ու սղտիկը պիտի կարդան զինքը , եւ ատոր տեղ այդ ամբողջ ժողովուրդէն , այդ բովանդակ հասարակութենէն տասը կամ քսան եւ կամ երեսուն անհատի համար միայն ինքզինքը ծանօթ տեսնել , — եւ ան ալ ի՛նչ ծանօթութիւն , — ըսէ՛ք , յուսահատեցուցիչ չէ՞ ինքնին :

Չեմ ըսեր սակայն թէ այդ ժողովրդային համակրութիւնը գոյութիւն չունի . ընդհակառակը , կա՛յ ան , եւ շատ զգալի կերպով . միայն թէ , այդ համակրութեան հիմը այն չէ՛ ինչ որ ճշմարիտ գրողը պիտի սիրէր տես-

նել : Մինչեւ այսօր՝ ժողովուրդին դէպ ի գրագէտ մը ցոյց տուած վերաբերումը , ըլլայ նպաստաւոր կամ աննպաստ , բնաւ երբեք գիտակից համոզման մը ծնունդը չէ եղած . եթէ երբեք այսինչը փոխադրուած ճանչցուած է եւ այնպէս կը դառնաւ , պատճառը սա է որ կամ ի՞նչ այդպէս ըսած է եւ կամ ուրիշ մը . եւ իր անձնական համոզման ու գնահատելու կարողութեան մասին անվստահ ո՛ր եւ է մարդ իսկոյն այդպէս հաւատարմ այդպէս ալ հաւատացուցեր է : Ասանկով է որ մեր մէջ կարգ մը ոչնչութիւններ փոխադրուած , հոգեբան , բանաստեղծ , գրագէտ , վիպագիր , հրապարակագիր , մաթեմատիկոս , մանկավարժ , դաստիարակ , խմբագիր , բանասէր , լեզուաբան ու քննադատ եղած են , եւ այդ հանգամանքներով կը ճանչցուին : Անցեալ տարուան մանկավարժական համախառն դասախօսութեանց միջոցին ես անձամբ տեսայ ցաւագարներու եւ ապուշներու ամբողջ մեծամասնութիւն մը՝ կազմուած ո՛րչափ վարժապետներէ , այնչափ ալ , — չպիտի քաջութիւն ընելու , — վարժուհիներէ՝ որ աս ու ան դասախօսը երկինք կը բարձրացնէր՝ առանց անոր խօսածը մօտիկ ըրած եւ կամ հակառակ պարագային , առանց անոր խօսածէն բան մը հասկցած ըլլալու : Ասոր պատճառը ուրիշ բան չէ՛ , եթէ ոչ սա ցաւալի պարագան թէ սիրած ենք միշտ համբաւելու անձնական քննութիւն մը ընելու եւ զանոնք մեր գնահատման համեմատ դատել ուզելու :

Մինչեւ այսօր մեր մէջ աս եղած է բարոյական վարձատրութիւն ըսուածը՝ զոր առանց այլ եւ այլի կրնանք անբարոյական վարձատրութիւն մը անուանել : Ուրախաբան վարագայ մը եթէ կայ՝ սա է որ նոր սերունդը սկսած է աւելի խաղող , աւելի քննադատող ըլլալ , եւ ծանօթ անուններու մասին իր որոշ գնահատման եղանակը ունենալէ զատ , սկսած է փնտել բոլոր անոնք՝ որոնք տակաւին անուն մը չեն չինած թէ եւ , բայց որոնց քով արժանիքն ու կարողութիւնը չեն պահիր : Այս պարագան սքանչելի գրաւական մըն է անշուշտ մեր մտաւոր բարեշրջման տեսակէտով , բայց մինչեւ որ ցեղային յատ-

կութեան մը վերածուի՝ տարիներ ու տարիներ պէտք են անցնիլ :

* * *

Արդ , քանի որ մէկ կողմէ նիւթական վարձատրութիւնը եւ միւս կողմէ ալ բարոյական վարձատրութիւնը բնաւ չեն գտնուիր այն տեսակ հանգամանքներու մէջ՝ որ կարենան փոխարինել ո՛ր եւ է զրկանք , յոգնութիւն կամ աշխատանք , ուրեմն աններելի է ենթադրել թէ մարդ մը մեր մէջ — ինչ կարողութեան ալ որ տէր ըլլայ , կրնայ ինքզինքը բոլորովին գրականութեան նուիրել : Իր ըրածը պարզապէս խենթութիւն մը պիտի ըլլար , եւ որովհետեւ խեղացի մարդը բնաւ խենթութիւն չունի , մերիններն ալ գրականութեան մէջ նետուելէ առաջ աշխատած են ո՛ր եւ է տարրեր զբաղում մը կամ ասպարէզ մը ընտրել իրենց , ու գրած են այն ատեն միայն երբ ժամանակը եւ տրամադրութիւնը չեն պակաս իրենց քով : Անոնցմէ ոմանք փաստաբան են , ոմանք բժիշկ , ոմանք ուսուցիչ , վաճառական կամ խմբագիր , եւ ինքզինքնուն աւելի այդ հանգամանքներն է որ կու տան՝ քան թէ՛ գրագէտի , գրչի մարդու հանգամանքը :

Եւ աներեսութիւն չէ՞ այդ տեսակ մարդոց նկատմամբ պահանջկոտ ըլլալ , այդ տեսակ մարդոցմէ որոշ ու սահմանաւոր գործ մը պահանջելու իրաւունքը տալ ինքզինքին : Անոնցմէ ամէն մէկը վստահ եմ որ սիրով պիտի թողուր իր ձեռքի գործը , եթէ երբեք կարելի ըլլար իրեն ապրիլ մի՛ միայն գրականութիւն ընելով : Որովհետեւ գրելը , մանաւանդ այդ պայմաններուն մէջ , մէկն է այն հոգեկան հրճուանքներէն՝ որոնք ամէնէն հաճելիներն են կեանքին , եւ ամէնէն ալ հազուագիւտները :

Բ.

Խնդիրը իր ամբողջութեան մէջ այսպէս քննելէ ետքը , կ'անցնիմ Տիկին Տիւսարի պարագային՝ որ բոլորովին տարրեր ըլլալով հանդերձ , խորհրդածութեան նոյնչափ կարեւոր կէտեր կը ներկայացնէ :

Բնականաբար ինքզինքը գրականութեան

տալով, Տիկին Տիւսար նիւթական վարձատրութիւն մը չպիտի ակնկալէր մեր հասարակութենէն. իր կարողութիւնն ու զիրքը աւտոր համար չէ՛ որ զինքը պիտի մղէին գրեւոր. իրեն համար, կատարուած աշխատութիւն մը հոգեկան գոհացում մը միայն կրնար բերել, եթէ նոյն իսկ արժանանալու չըլլար ո՛ր եւ է բարոյական վարձատրութեան մը, այսինքն չտարածուէր բուն իսկ ժողովրդային խաւին մէջ. Այն ատեններուն՝ ուր Տիկին Տիւսարի վէպերը հրատարակուեցան, ժողովուրդը այսօրուան չափ ալ չէր ընտելացած գրականութեան. լրագիրը իր տղայ վիճակին մէջ, աւելի իբր շիւքս մը եւ հաշուեյարդարութեան վայր մը նկատուած էր, որչա՛փ Պուլիս, այնչափ մըն ալ գաւառները, Բաթանորդ եղող մը կա՛մ իր էջը կ'ունենար քելիք, կամ իր մէկ անձնական հաշիւը կը կարգադրէր. եւ կամ իբր զարդ մը լրագիրը կը պտտցըներ հետը, ճիշտ ինչպէս որ պիտի պտտցնէր ձեռնոցը կամ գաւազանը. Այդ ատեններուն, գրականութիւնը տարածուած էր միմիայն քանի մը մասնաւորներու տունները, աւելի կամ նուազ ազնուապետական սալոններու մէջ, ուր օրուան յօդուածի մը վրայ կը խօսէին, կը վիճարանէին, ուր օրուան գրական խնդիրներով կը հետաքրքրուէին, կը յուզուէին. անոնցմէ դուրս՝ այդ հետաքրքրութիւնը, այդ շահագրգռութիւնը գտնելու համար խմրագրութեան մը դուռը պէտք էր ափ առնել. եւ ան ալ քանի մը ջոջ ու ազդեցիկ խմրագրութեանց դուռը:

Այս պայմաններուն մէջ, ինչպէս ըսի, Տիկին Տիւսար հոգեկան հրճուանքի տեսակէտը միայն կրնար աչքի առջեւ ունենալ, ամէն անգամ որ գրիչը ձեռք առնէր իր դիրքին շնորհիւ ազատ մուտք ունենալով այն սալոններուն մէջ, ուր գրական գործ մը կըրնար խօսակցութեան նիւթ դառնալ, ինքն իսկ մէկը ըլլալով այդ սալոնի տէրերէն, բնական է որ պէտք եղածին չափ գոհացած կը տեսնէր միշտ իր ակնկալութիւնը, շնորհաւորուելով ու գովուելով օրուան գրողներուն ու զրասէրներուն կողմէ, որոնց գրեթէ ամբողջութիւնը իր բարեկամներէն ու ծանօթներէն կազմուած էր: Քիչ ետքը, այդ գրա-

կան յաջողութեան միացաւ ուրիշ ո՛չ նուազ մեծ ու գեղեցիկ յաջողութիւն մը՝ որ զինքը առարկայ դարձուց ամէն շնորհաւորանքի: Իր աղջիկը, Տօրինը, մեծցած էր, եւ մեծցած էր հոգիի, սրտի ու մտքի ա՛յն աստիճանի զմայելի գեղեցկութեամբ մը՝ որ մանաւանդ այդ զարգացած ու ազնուապետական շրջանակներուն մէջ ընդհանուր հիացման առարկայ կը դառնար օրէ օր. ամէն մարդ կը հիանար անոր հոգիին մաքրութեան վրայ, ամէն մարդ կը հրապուրուէր անոր մտքին ճիւղերէն, եւ ամէն մարդ կը գովէր անոր սրտին անսահման բարութիւնը: Եւ ամէն մարդ առիթը չէր փախցնէր շնորհաւորելու այն կինը՝ որ այդ աստիճան կատարեալ աղջկան մը մայրը ըլլալուն հետ գրեթէ անոր միակ մարգիչը, անոր միակ դաստիարակիչը եղած էր:

Բայց այդ փառաւորման, այդ երջանկութեան ու սրտի գոհունակութեան առաջին հանգրուանին մէջն իսկ անսպասելի դժբաղդութեամբ մը աղջիկը հիւանդ կ'ընայ յանկարծ. եւ հոտկէ կը սկսի այն ցաւագին վէպը՝ որ շատ եղբրական վախճան մը պիտի ունենար ու Տիկին Տիւսար մը պիտի խէր մեղմէ: Հիւանդութիւնը որուն պատճառաւ տարաբաղդ աղջիկը անկողին ինկած էր, անսպասելի ըլլալուն չափ ալ անդարմանելի հիւանդութիւն մըն էր, անողք հիւծախտը որ խնայել չգիտեր բնաւ. ու կը գուշակէք անշուշտ թէ իր աւուղջ ու գեղեցիկ փթթումին մէջ յանկարծ ցողունէն կարուած վարդի մը պէս, օրին մէկը խեղճ աղջիկը կը մեռնի ծաղկի սիրտ բզքտող մահով մը:

Ի՞նչ կ'ուզէք որ ընէր մայր մը:

Իր սրտին ու հոգիին ամէնէն անուշ ու բարձր փառասիրութեանը մէջ զարնուած, ո՛չ արցունք կը թափէ, — ինչպէս որ կ'ըսեն, — ոչ ալ աւելի կամ նուազ պայմանագրական ու տալիակ գոռում գոջումներով կ'արտայայտէ իր վիշտը: Թմրութեան պէս բան մը կը գրիէ զինքը քանի մը օր, տեսակ մը անզգայութիւն, որուն ցրուելէն ետքը սրտի խորունկ ցաւով մը կը տեսնէ թէ իր գաւկին մահը որչա՛փ պզտիկ, որչա՛փ աննշան ազդեցութիւն մը միայն ըրեր է այն շրջանակին

վրան՝ որուն մէջ ինքն ու թոշող թոշուներ ամէն օր փառաւորանքի , գովասանքի ու հրացման կ'արժանանային . շրջանակ մը՝ որուն մէջ իր բռնած գիրքը սա միամիտ հաւատքը տուած էր իրեն՝ թէ հոն իր վիշտը բաժնուած պիտի տեսնէ , թէ հոն իր ցաւով տառնապողներու պիտի հանդիպի եւ թէ վերջապէս հոն պիտի գտնուին աչքեր՝ որոնք գոնէ մէկ երկու շիթ արցունք պիտի թափեն իր վաղաւեւ աղջկանր յիշատակին համար :

Այս յուսախաբութիւնը՝ որ ամէն բանէ առաջ ապերախութեան պէտք եղածէն աւելի աչքառու արտայայտութիւն մըն է , պարզապէս աղիտարեր կ'ըլլայ խեղճ կնոջ համար : Սրտի աննկարագրելի ցաւը զոր զգացած էր այդ պատճառաւ , կը ստիպէ զինքը բաւական բաց անջրպետ մը պահելու իրեն եւ այդ շրջանակին միջեւ , անջրպետ մը որ երթալով կ'ընդարձակուի , երթալով աւելի ցուրտ հանգամանք մը կ'ստանայ , մինչեւ որ վերջնական բաժանման կը յանգի : Այդ բաժանումէն ետքը , Տիկին Տիւսարի կեանքը ամբողջ հէքեաթ մըն է , հէքեաթի մը ցաւագին անուշութեամբը ընդելուզուած . — Անով երեւան կուգայ անձնութեան ամէնէն ցայտուն ու գնայլելի օրինակներէն մէկը՝ զոր մարդ էակը երբեք կարող եղած ըլլայ մէջտեղ դնել : Իր ցաւին սաստկութեանն ու մանաւանդ անդարմանելիութեանը մէջ խեղայեղած մայրը ինքզինքը բոլորովին աղջկանը յիշատակին կը նուիրէ : Տօրինի սենեակը մատուռ մը կ'ըլլայ իրեն համար , մատուռ մը՝ որուն մէջ կը հաւաքէ ու խնամտաւորաբար մը առարկայ կը դարձնէ բոլոր այն բաները որոնք ո՛րեւէ առնչութիւն մը ունեցած են անոր հետ : Հոն կը թաղէ իր սիրտը , անոր մէջ միայն իր հոգին ձգտումներ կ'ունենայ , ու եթէ չեմ սխալիր , ինքն ալ մահը կը գրկէ այդ միեւնոյն մատուռին

մէջ , միշտ իր աղջկանը , միշտ իր սրտի հատորին վրայ մտածելով :

* * *

Այս մանրամասնութիւններէն ետքը , կարծեմ ձեր ամէնուրեք աչքին կը չքանայ այն իրաւունքի տեսակէտը՝ զոր Տիկին Տիւսարի մահուան առթիւ ուզեցին յուզել : Արդարեւ կին մըն էր՝ մոքով շատ հարուստ՝ որ իրմէ սպասուածը չտուաւ , բայց միւս կողմէ ալ կին մըն էր՝ որ արդէն իսկ բաւական աշխատած էր իր ցեղին համար , մոքով ու զործով . — որովհետեւ պէտք չէ մոռնալ թէ Տիկին Տիւսար հանրային շատ գնահատելի եւ օգտակար գործունէութիւն մըն ալ ունեցած է . — եւ որ նոյն իսկ հոգեկան հրճուանք մը չգտաւ իր աշխատութեանց փոխարէն :

Մեր մէջ , գրողը , հանրային աշխատաւորը սո՛սկ իր անձով եւ երբեմն նոյն իսկ սո՛սկ իր անունով գոյութիւն ունի . անկէ դուրս ոչ ոք կ'ուզէ մտածել թէ այդ գրողն ու հանրային աշխատաւորը կրնան իրենց վիշտերը , իրենց ցաւերը ունենալ եւ տեսակ մը մասնակցութիւն , տեսակ մը միօրթարտնք սպասել ամէն անոնցմէ՝ որոնց համար կ'աշխատին , որոնց համար կը տքնին :

Մտածման այս կերպը ապահովաբար պատուարներ յատկութիւն մը չէ՝ մեզի համար : Բայց այդ գէշ սովորութիւնը պահելով հանդերձ՝ ելլել յաւանքիլ թէ մենք միշտ իրաւունք ունինք պահանջլիւտ ըլլալու մէկու մը մասին՝ որուն ուրախ տրամադրութեան արգասիքը վայելած ենք եւ որուն ցաւին ու վիշտերուն նկատմամբ անտարբերութիւն մը միայն ցոյց տուած , ասիկա անբարոյականութեան տեսակ մըն է՝ որուն համար , գոնէ իմ մասիս , չեմ կրնար որակիչ ածական մը գտնել :

ՄԷՐՍԷՏԷՍ



ՎԱՌԱՐԱՆԸ


Կը վառէր ան գիշեր ցորեկ, ամէն օր
Սննեակիդ մէջ: Գետնի գորգին վերայ դուն
Ընկողմանած էիր կես քուն, կես արթուն,
Սրբութեամբ շուրջդ մարմնիդ հրապույրը բոլոր:

Ու դռնակէն՝ լոյսը կրակին կը փայլէր
Տաքցնելով մորթըդ կատուի պէս մըսկոտ
Եւ մութին հետ շինելով ըստուերն այն աղօտ
Որ քու մըռայլ գեղեցկութեանդ կը փայլէր:

Եւ տեսնելով մարմինդ լեցուն խոստումով
Քեզի նայող բոցը այդ լուս. կրակին
Խելքը գլխէն գացածի պէս, աղուոր կին,
Կը ցատկըռաւիր հոս հոն յիմար ոստնումով

Գ. 202ԸԱՊ

ՄԱՐԱԾ ԶԱՅՆԵՐ



ՎԵՐԶԱՅՈՂ ԴԱՐՈՒՆ ՍԵՄԻՆ ՎՐԱՅ

Եօթնեակ մը առաջ փակուեցաւ Դար մը,
որ մարդկային բովանդակ պատմութեան դա-
րերը հաւաքելով նժարին մէկ թաթին մէջ,
ինքը մինակը կրնայ ծանրցնել միւս թաթը,
այնչա՛ր լայն, հսկայ ու ահագին համեմա-
տութիւն մը առած է: Համերոտի կոյր կիկ-
լոպին պէս, կամ աւելին, առատելական
տիաաւններուն մէկին նման բան մը եղաւ
ինքը, որուն ողջերթը մրմնացինք մենք, իր
ծերուկ արգանդին ազազուն պտուղները, իր
մեծութենէն ահաբեկ:

Երթա՛յ բարով:

Բիրաւոր Հոմերներու տաղանդը միա-
ցած, պիտի չկրնան երգել անհետացող դարը,
եթէ նոյն իսկ ազգերուն անհատի անուններ
տան, ու կապուէն վեր զէպի անձանթ
անսահմանութիւնը սլանան:

Եթէ միայն վեր առնէինք Ուէսթմինսթրն
ու Բանթէնը, լոկ այդ երկուքը բաւական
էին անսահմանութիւն տալու իրեն, այնչա՛ր

մեծ եղաւ ոտքը անդունդին եզրը, ու ճա-
կատը երկնային լուսաւորներուն դարձուցած
տասնորեակները դարձ: Քաղաքի մը մէջ, որ
իրաւամբ կը յափշտակէ կոյր մեծագոյն դիւ-
ցազներգական օրօրանքը ըլլալու պատիւը, կը
ներէք անշուշտ որ բազէ մը հոմերական զգա-
ցումներու անձնատուր, գիտեմ հսկայ ծե-
րունիին գնացքը, արծուի աչքերով: Իրեն
պիտի չի հանդիպինք այլ եւս, կամ գուցէ
նորը աւելի շողարձակ ճաճանչով, աղօտա-
ցրնէ իր նախորդին համարը: Մեր զաւակ-
ները թերեւս ծիծաղին անցնող դարուն
նկատմամբ մեր ունեցած պաշտօնման վրայ,
ինչ որ ալ ըլլայ, մենք անոր մագնիսացած
զաւակներն ենք, թէեւ ազազուն ու վախո,
որովհետեւ նախանձոտ դարը իր հետ կը
տանի իր մեծագոյն զաւակները, յաջորդին
կտակելով անոնց Երգին ու Մտածումին
փառքը:

Երթա՛յ բարով:

* * *

Մտքի յանկարծական ոստումներէն մէկով անցայ մարդկութեան կեանքէն մերինին, ու աւելի մասնաւորելով, այդ տեսակէտին մէկ մանրանկարը հանդիպեցաւ աչքիս, այն շիրիմներուն առջեւ զորս կը հովանաւորեն Ս. Ստեփաննոսի բակը գտնուող քանի մը ծերուկ նոճիկներ ու սօսիկներ :

Մահամերձ դարուն վրայ, մարդ գերեզմանին առջեւ միայն կրնայ լաւապէս մտածել : Նոյնը պատահեցաւ ինծի ալ, երբ մուրուն քայլելով կանցնէի քիչ առաջ մեր եկեղեցիին բակէն, ուր՝ նորեկներու քալումքին անմտադիր, կը ննջեն անդորր ու խաղաղիկ, Ապրոսներ, Շուսուֆեաններ, Նուպարեաններ, Պաղաւադարեաններ ու Վանանդեցիներ, անցնող դարուն այդ մուգուած եւ անմոռանալի զաւակները : Ս. Ստեփաննոսն ու Ս. Մեսրոպեանը, դպրոցն ու եկեղեցին, երկու անրաժանելիները, շերիմներով կապուած են իրարու, որոնց միջեւէն՝ յաւերժական հովը կը դողացնէ նոճիկն տերեւն ու մտածողին հոգին, երկուքն ալ յարեւմտեան իրարու, նոյն բաղդին խաղալիկ, Միլվուայի ըսածին նման :

Տասնըիններորդ դարու Իզմիրը հո՞ն է ահա :

Աւելի սրտայոյղ մանրանկարի մը չեմ հանդիպած ո՛չ կեանքիս ու ո՛չ ալ յիշատակներուս մէջ այդ գերեզմաննոցէն դուրս, եւ ակամայ կը մտարեւեմ Հարովը .

Ի սրբազանն ագարակ, Սրբոյ Խաչին պարագիր,
Հանգչին ածինք, որք զվայրն իսկ յարդարեն սրբազոյն,
Անմահութեամբ իմեն լի է խաղաղեան այն մօխի,
Թեպէտ չիցէ այլ ինչ անդ, բայց յիշատակ անցելոյն . . .

Զօհրապէն փոխ պիտի ուզէի իր մէկ վէպին վերնագիրը, Անհնճացած սեւուռնդ մը, դնելու համար գրուածիս ճակատը եւ պատկերելու այն խոհերը, որ ելեկտրական լուսապատկերի մը արագութեամբ անցան հոգիէս՝ այդ լքուած գերեզմաննոցէն անցած պահուս :

Տասը-տասներհինգ տարիէն աստին նոր մեռել չի թաղուիր հոն, կարծես հին ննջողները մինա՛կ մնալ կուզեն, իրենց բարի ու միամիտ դասակարգին հետ, նորերը քաղաքէն դուրս կերթան հանգչիլ, հարուստի եւ

աղքատի խտրութիւնը մինչեւ մեռելոց ալ խարհն ալ առնել տանելով :

Օ՛հ, հիները աննմա՛ն են եղբր նորերուն :

Տաք, կրակոտ, մտերմութեան շունչով ոգեւոր, հաւաքուած Ս.-Ստեփաննոսի շուրջը, տուներին քով քովի սեղմուած Հայնոցին մէջ, սրտերնին աւելի մօտ իրարու, այդ լարի հիները տարբեր գաղափարներ ու բարքեր խելալ ունին եղբր նորերին :

1801ին, իրենց նոր դարը ողջունելու են այդ հիները հիւանդանոց մը հիմնելով, 1825ին Մեսրոպեանի հին շէնքը կառուցել են, 1845ին, ահագին հրդեհին ճարակ գացած թաղերին շինէլէն առաջ՝ Թրքահայոց մեծագոյն ու է՛ն փառաւոր եկեղեցին շինել են, 75ի ատենները Ս. Հովսիփոսեանը, 80էն 89ին նոր հըս. կայ հիւանդանոցը ու փառաւոր Ս. Մեսրոպեանը, ու եկեղեցիին, հիւանդանոցին, դպրոցին աւելի քան 60-70,000 լիւայի կալուածներ կտակել են միշտ նոյն բարի ու բարեմիտ հիները, որ հիմա, սրդողածի, քենոտածի պէս անձայն անշուշտ կը քնանան : Իրենց մէկ երկու մեծերը միայն, Սպարդապեան երկու հարազատները, գացել են հանգչիլ իրենց կառուցած գթութեան յարկին քով, արդարեւ ուր քուտով :

Զգացած սարսուռս քանի մը բառերու մէջ բնաւ պիտի չի կրնամ ամփոփել : Նոյն հիները նաեւ գրականութեան անհրապոյր, սակայն օգտաւէտ շաւղին մէջ, լրագիրներ հիմնել, թատրոններ կազմակերպել, գրքեր հեղինակել ու թարգմանել են : Անցնող դարը, մէկ երկու բացառութեամբ, միւսները առած տարած է ու նոր դարը գուցէ այդ էջը վերջնապէս փակէ Իզմիրի Հայոց մտաւորական կեանքին համար : Աստուք մտածելէ վերջ, անկարելի է սրտի ցաւագին ճիւղումով մը չի դիտել ալեւոր Մելքիսեդեկ Սրբազանը, հիներուն գործակիցը ու ներշնչողը շատ անգամ, որ իր վերադարձին կարծես դարերու փոփոխման մը առջեւ գտաւ զինքը, ու աչքերը շփեց անշուշտ գէշ երազողի մը պէս, երբ վերստին կարդաց տառնէն աւելի մեծ հաստատութեանց յիշատակարաններ, որոնց մէջ բարեբարներուն հետ իր ալ անունը դրուած էր ու տեսաւ թէ հիները գացել էին,

զինքը նորերուն հետ մինակ թողլով . . . :

Հիներու շիրիմներուն մէջ հատ մը կայ սակայն , որուն առջեւ շատ անգամներ մտածած եմ , մտարեբեղով Մկրտիչ Թէրզեանները , Դաւիթ Սարգիսեանները ու Մկրտիչ Սարգեանները : Անդրէաս Վարժապետին գերեզմանն է ան , որ գրեթէ քառորդ դար վարէր է Մեսրոպեանի տեսչութիւնը , եւ որուն աշակերտները — միշտ հիներ — օրինակելի պաշտանքով մը յաւերժացնել փորձեր են իրենց վարժապետին յիշատակը , վրան բրգաձեւ փոքրիկ շիրիմ մը կանգնեցնել (1) :

(*) Ծ. Խ. — Այս յօդուածը , որուն մէջ Մամուրեանի նկատմամբ յիշատակութիւն մը չըլլալը աչքի կը զարնէ , գրուած էր տաղանդաւոր գրագէտին մահուընէն առաջ :

Ասիէ հարիւր տարի ետք , եթէ Մասիսի այս թիւը ձեռքդ անցնի , իմ ապագայ պաշտօնակից ընկերս , քսանրմէկերորդ դարու հայ ուսուցիչ , գիտցիր թէ հոգիիս խորունկէն կը մաղթեմ քեզի հաճար ապահով ու փառաւոր ապագայ մը : Այն ատեն մարած պիտի ըլլայ իմ ձայնս , բայց հոգիներդ աշխարհին հրճուանքով պիտի դիտեմ քու քայլերդ նոր սերունդիդ հետ , որուն կը մաղթեմ ունենալ հին բարեմիտ մարդերու հաւատքն ու երանութիւնը , նոր եւ անպարփակ թօնչեղութիւն , դէպի անհուն կատարելութիւնը :

Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ

Իզմիր



(Ե Ր Գ)

Երբ անրատուեր
Զինք երկինքն ի վեր,
Մեր նաշուածքն անմոլոր
Կը յաճին բոլոր
Մեր սիրտն ըզքեզ կորսնէ անձկագին,
Ո՛վ սեր, արև մեր կեանքին :

Զերդ ծաղիկ, մարգ արօտ
Շողի. ցողի ծարաի.
Մենք ալ միշտ ենք կարօտ
Անուշ գութ ու գորովի :

Մեր հոգւոյն մէջ, դու. սեր, քաղցր աղբիւր
Հեշտութիւններ ճեղուս բեր,
Անմահ ընծայ
Քեւ աշխարհ կը ցնծայ :

Մեկտեղ սիրուն
Թռչնոց իրոյներուն
Որոնց տաս ներդաշնակ
Շեշտ ու եղանակ :

Առաւօտուն, գեփիւռին սոյն աղու
Մօրկան օրօր, ժրպիտ տրդու.
Հեզիկ մրմունջն առուակին
Քարնան վարդիւր որ ծաղկին
Շիկնոտ կոյսեր
Քեզ կ'երգեն, Սեր
Ո՛վ Սեր արև մեր կեանքին

ԱՂԵՔՍ. ՓԱՆՈՍԵԱՆ

ԲԱՐԻԶԵԱՆ ՔՐՈՆԻԿ

ԱՂՔԱՏՆԵՐԸ՝ ԾՆՈՒՆԴԻ ՏՕՆԻՆ : — ՏՈՒԹ. ԲՈԹԷՆԻ ՄԱՀԸ :

Հատինաց իթումը ու Ծնունդը, գարնան օգոժ, փառաւոր եղան. բայց իթումը կամ Ռէվէյոնի գիշերը յայտնի չէ թէ Աստուծոյ փառաբանութեան նուիրուած է հոս թէ աշխարհիկ զուարճութեանց : Այդ գիշերը ամէն թաղի մէջ մինչեւ լոյս բաց կը մնան ճաշարանները, գաղինօները : Բարիզցիք զիրար Ռէվէյոնի կը հրաւիրեն, կէս գիշերուան Պատարագին գացողներն ալ, չի գացողներն ալ : Գերազանց շուքով տեղի կ'ունենայ այս Պատարագը, մանաւանդ մեծ եկեղեցիներու մէջ, լոյսի շողերով ու ծաղիկի փունջերով ուղղուն, ուր երեւելի երգիչներու ձայներ կը լսուին, երբեմն բարձր ընտանիքէ Տիկիներն ու Օրիորդներն ալ կը մասնակցին արարողութեան որ հիանալի երաժշտութեան մը ընկերակցութեամբ կը կատարուի : Բարիզի բոլոր եկեղեցիները թէպէտ միշտ, բայց մանաւանդ այն գիշերը նստելու տեղ գծուար կը գտնէք, այնչափ լեցուած են : Նոր Տարին նոյնպէս մեղմ էր օդը, ամէն սեւեւ ու տարիքէ բխրաւոր աղքատներ, մինչեւ 4—5 տարու մանուկներ, փողոցներու ու մանաւանդ եկեղեցիներուն շրջակաները, թեթեւ հագուած, անցորդներուն ետեւէն կ'երթային, վասն զի մինակ Կաղանդին օրը հրաման ունին ուզածնուն չափ մուրալու. եւ վա՛յ այն սղարմածին որ մէկ քանիին մէկտեղ կուտար, ազատեցիք չունէր միւսներուն ձեռքէն. շատ տեղ սովորական եղող այս բարքերը տարօրինակ կը թուին սակայն հոս՝ ուր մէկը անօթի ալ մեռնի՝ չի կրնար առանց արտօնութիւն ունենալու հաց մուրալ, ու արտօնութիւն ունեցողները չ'են սովորաբար աղքատները : Այնպէս որ, ժողովարար որ չափազանց աշխատասէր է, թէպէտ բարի՝ համոզուած է թէ մուրացողները ամէնքն ալ ծոյլ են կամ գինով ու տուածդ վայրկեանին գինետունը պիտի մսխեն, եւ խուլ կը մնայ ամէն

աղերսի : Անգամ մը տեսայ աղքատ մը, մութ ատեն (ձմեռը արդէն ժամ 3½—4ին մութ է) որ ուրախ գուարթ քալող այր ու կնոջ մը ետեւէն կ'երթար, «Տիկին, մէկ սուտուէք, ձեր դիմացը հաց առնեմ ուտեմ» : Ետեւէն անգամ չի գարձան : Այստեղի աղքատները այնչափ քիչ կ'ընդունին որ ընտահաբար չեն, ու կամայ մը քովէդ ձայն մը կը լսես «Գործ չունիմ, սու մըն ալ չունիմ, տնօթի եմ» : Անշուշտ ճշմարիտ անօթիներ ալ կան : Անգամ մը, խնձոր կար ձեռքի պայուսակիս մէջ, կին մը՝ գիրկը տղայ մը՝ կամայ մը ողորմութիւն ուզեց «Մանրուք չունիմ, բայց խնձոր կ'ուզէ՞ք» : Հարցուցի : — «Հարկաւ կ'ուզեմ» պատասխանեց ու ռափերիւսի մը աւելցուց անանկ խորունկ շեշտով մը որ գէշ եղայ : Բայց ունեցողն ալ ո՛ր մէկին տուա՞ր Գաւառներէն, ուր որ աղքատ ազջիկ կամ աղայ կայ, հոս կուգան : Բարիզ հարուստ է, մեծ է բնելով. շատերը կ'ապականին չուտով, մայրաքաղաքի ազատ բարքերէն : Անօթի մնացողներն խի չեն ուզեր վերադառնալ երկիր ու անգործը, աղքատը կը շատնայ : Եթէ դիպումս ու մտաւորները միջնակարգ թաղի մը թաղապետական պաշտօնատան առջեւէն անցնիք, կը տեսնէք 30—40 հոգինոց խումբեր որ գործ չունին, կը սպասեն : պաշտօնեայ մը կուգայ ու ամէն մէկուն գործ մը կը յատկացնէ, ասոնք պարկեշտ մարդիկն են որ աշխատիլ կ'ուզեն. խի միւս հազարաւոր դատարկապարտներ որ քիթերին կարմիր, շրթունքնին կախ, մօտերնուն անցնելու կը վախճաս : Ամէն գիշեր առնոց մէ 2—300 հոգի բանտերը կը լեցնեն : Ասոնց մեծ մասը գողեր, մորդասպաններ են, ու դատարկապարտներ, ամէնքն ալ ալքովի զո՛հ, (չնորհքով բնկերութեանց մէջ շատ կը պակսի, կ'ըսեն, ալքովի գործածութիւնը եւ մեծ տուներու ու ճաշարաններու մէջ գինիի

տեղ կը գործածեն տեսակ տեսակ պարզ ջուրեր) որոնք բնակարան շուկին ու կամուրջներու տակ կը ժողովուին : Վերջերս 10 օրուան միջոցին 3000 հոգի ժողովեր էին : Սոսկալի բան է Բարիզ՝ աղքատութեան տեսակէտով որ մեծ թիւ կը կազմէ, կեանքը սուղ ըլլալուն :

Անցեալ օր դատի մը պատմութիւնը կ'ընէին . մարդ մը ճաշարանը քանի մը ֆրանքի ճաշ կ'ընէ ու չի վճարէր . ճաշարանապետը բռնել կու տայ զինքը . բայց դատաւորները տեսնելով որ պարկեշտ անցեալ ունեցող մէկն է , ամուսան մը բանտի կը դատապարտեն , հանդերձ Պէռանժէի օրէնքով , որ ըսել է այդ ամիսն ալ կը ջնջուի ու մարդը ազատ կը թողուի : Բայց արձակեալ , սաստիկ բարկանալով , այն տեսակ վարմունքի մը մէջ կը գտնուի որ վեց ամիս բանտարկութեան կը դատապարտուի նորէն . ան ատեն , չառ ուրախ «Դոհոթիւն Աստուծոյ , գոնէ վեց ամիս չախտի մտածեմ , կ'ըսէ թէ ինչպէ՞ս ապրիմ» : Երեւակայելու է երբ աղքատ մնացողը օտարական ալ է : Վերջին օրերս սաստիկ ցուրտ կ'ընէր . հրաման տրուեցաւ որ այն ցուրտերուն աղքատները մեծ սրահներու մէջ խոշոր վառուած կրակարաններու մօտ ժողովուին ու անցունեն զիշերները : Ուրիշ ժամանակաւոր պատապարտանքի ալ կան զիշերուս . միլիոններ կը ծախսուին կարօտեալներուն համար . բայց 3 000 000 ժողովուրդ կայ Բարիզ ու աղքատը բազմաթիւ է :

§ Տօթթոր Բօթէնը մեռաւ , 75 տարեկան հասակին մէջ , զրեր էին լրագրիները : Այս պարզ լուրը ահագին աղէտ մը կը գուժէր գիւսական աշխարհին համար : Բժիշկիները միայն կրնան գնահատել իր բժշկական արժանիքին բարձրութիւնը : Մենք , ոլորդ մահկանացուներս , պիտի ախտոսանք հազարաւոր հիւանդներու անյոյս մնալը , եղական բժշկի մը ու մարդկութեան բարեբարի մը կորուստը . վասն զի չկայ երկրորդ Բօթէն մը , կ'ըսեն ամէնք . ու մեծ բժշկին հետ , մեծ մարդն է որ կ'անհետանայ , փափուկ զգացումներով այն հիւանալի մարդը որուն յաջորդ մը տաւրիններու մէջ չի հասնիր : Կուզէի տեսնել Տօթթոր Բօթէնը՝ հիւանդանոցին մէջ դաս տուած ատենը , բայց ինչպէ՞ս : Գաղղիացի բարեկամ

կնոջ մը հարցուցի . — « Ապահովապէս իր բժշկութեանը համար չէ , ըսաւ . բայց այս օտարականները այսպէս են . մեզմէ ազէկ կը պտտին Բարիզը ու երբ քիթերնուն ծայրը ցաւի , Բօթէնը պէտք է տեսնեն , ինչպէս կը տեսնեն Նօթրը Տամի , Լուվրը , Բանթէոնը » : Խնդացինք . Յանկարծ օր մը ճամբան ոտքի դարձուածք մը ունեցայ , ամիս մը կարեւորութիւն չի տուի , բայց սրունքս ուռեցաւ . դեղագործը , լուրջ ձայնով մը . « Օ՜ , լաւ խնամելու է , քաշելու չէ ընաւ » ու չգիտեմ ի՞նչ երկար պատմութիւններ ըրաւ որոնք շատ վախճուցին զիս : Ասիթն էր , քաջութիւնս ձեռք առի եւ ուղղակի Տօթթոր Բօթէնի գրեցի խնդրելով որ վայրկեան մը ընդունի զիս իր Հիւանդանոցին մէջ , ինքը անձամբ : Երկրորդ օրը քառթ մը առի իրմէ , իր ձեռքովը զըրուած , ուր կ'ըսէր թէ պիտի ընդունի զիս , առաօտուն , երբ հարբուիք ներէ իրեն գործի սխալ : Քանի մը օրէն երբ գացի , կանանց սրահն էր — 20-22 մահիճով մաքուր սրահ մը — ճերմակ գոգնոցը հագած , գլուխը գդակ մը , ինք հիւանդներէն տփօյն , մեղրամոմի նրբութեամբ . ոտքի վրայ , կարգաւ հիւանդները կ'այցեւէր , քաղցր խօսքերով , չըջապատուած 10-12 բժիշկներէ եւ ուսանողներէ : Սրահին մէջ աշխատութիւնը ընցնէր վերջ , եկաւ քովս , սովորական բժշկի մը պարզութեամբ , ըսաւ թէ բան մը չէ , կրնամ քաշել եւն : Աղւուր խօսքերով կուզէի շնորհակալ ըլլալ իրեն . ցած ձայնով *merci* մը միայն թոթովեցի , այնչա՛փ պատկառելի էր այս պզտիկ կազմուածքով մեծ գիտունը :

Որչափ ալ մարդ միտքը զրած ըլլայ , մէկէն ի մէկ պէտք էր վարժուիլ իր տեսքին . այնչափ ազեղ կ'ըսուէր , պզտիկ , նիհար , (երեսին երկու քովերը ճերմկած դեղին մազի թելերով) շիւ աչքերով . բայց աչքը իրեն կը քաշէր , կը հրապուրէր զքեզ իր խորունկ ձայնով , զմայլելի խօսուածքով ու անհուն բարութեամբ լեցուն այն անոյշ նայուածքով որ կեանք կուտար հիւանդին ու մեզմը ընելու էր օրհասն իսկ : Ինքն էր որ հրաշքներ կը գործէր իր սուրբ մը . չէ՞ մի սր սուրբ մըն էր արդէն , օրինակելի կենցաղով այդ ան-

նման վարդերը որ իր ամբողջ կեանքը մահ չեցուցած էր ցաւերու դարման գտնելու տառապողները մխիթարելու, աղքատները հարուստներուն հաւասար խնամելու եւ յարգելու :

Քանի մը տարի առաջ տակաւին մերժած էր Ռուսիայէն հարուստ հիւանդի մը իշխանական մէկ հրաւերը, վասն զի իր մէկ բարեկամը, հիւանդ, իրեն պէտք ունէր : Ու մինչեւ 75 տարեկան հասակին, մինչեւ որ մեռաւ, ամէն ատուր, երիտաւորդ աչա կերտներէն ալ կանուխ, հիւանդանոցն էր, երբեմն կիրակի առտուներն ալ, ու մէկիկ

մէկիկ գորգուրանքով կ'այցելէր աղքատ հիւանդներուն որոնք կորսնցուցին իրենց վերջին յոյսը : Կէս գիշերին, իր տունը, բարեկամներու հետ ճաշելէ վերջ, պառկեր էր Տոբթ. Բօթէն. առտուն խաղաղիկ մեռած գտեր էին զինքը անկողնին մէջ. ո՛չ ծաղիկներ զարգարեցին զագաղը եւ ոչ ճառեր արտասանեցին գերեզմանին վրայ. համեստ մարդու կտակն էր այս, լայց բովանդակ աշխարհի մէջ տարածուած համբաւ մը ու ամէնէն պաշտուած ըլլալու փառքը եղաւ ան թառամ ստակը իր գերեզմանին :

Ն.

ԱՆՏԵՍՈՒԱԾ ԳՈՐԾԸ

Ազգ. Հիւանդանոցի Ընդարձակ Օրացոյցը իր Կ Պոլսոյ Հայերը եւ իրենց Պատրիարքները հաստատածով մեզի կը յիշեցնէ վերստին կարեւորութիւնը անտեսուած գործի մը, որուն իրականացումը անշուշտ քանի մը տեսակէտներով օգտակար պիտի ըլլար :

Յիշեալ բաժնին մէջ, որ Հրանտ Առա. տուրի պատուարեք ուսումնասիրութիւններէն մէկն է, ուշագրաւ են այն կարգ մը տեղեկութիւնները զորս հեղինակը զանազան հայ Զեռագիրներու մէջէն քրքրած, պրպտած ու երեւան հանած է : Կ'ենթադրեմ թէ նոյն իսկ այս քանի մը թարմ ծանօթութիւններն ըլլան հեղինակը թեւադրող Կ. Պոլսոյ Հայերուն վրայ նոր ուսումնասիրութիւն մը հրատարակելու, այն քանիցս յեղեղուած օթեկ ծանօթութեանց վրայ, զորս ժողովուրդը շատ անգամ կարգալու ասիթը ունեցած է : Ահա խորեպատեհ աօթ մը որով դարձեալ կը յիշենք մեր Զեռագիրները, որոնց վրայ զրգաւորաբար շատ քիչ ուշադրութիւն դարձուած է մեր մէջ :

Այն յարգի ծանօթութիւնները որոնք այս վերջնոց յիշատակարաններուն մէջ պահուած կը մնան, երանի՜ թէ ցարդ եղած կատարեալ խուզարկութեանց շնորհիւ երեւան եկած

ըլլային. եւ քանի որ այսօրիսի բան մը ցարդ չէ եղած, կը հասկցուի թէ մեր միջին դարերու բարքերուն եւ դէմքերուն յիշատակութիւնը ինչ կարեւոր մտփոխութեանց պիտի ենթարկուի :

Հրանտ Առա. տուրի սոյն առջինեկ ուսումնասիրութիւնը ուրեմն իր յաջող նախադուրը այս կարգի հրատարակութեանց, իրաւամբ գնահատելի էր եւ արժանի իր տեղը գրաւելու Ընդարձակ Օրացոյցին մէջ : Այս մտադրութեամբ, կրնայ ըսուիլ թէ Ընդարձակ Օրացոյցը իր ամէնէն աւելի ժողովրդական հանգամանքին շնորհիւ յարմարագոյն հաստորն է տարուէ տարի եղած ծանօթութիւններն ու այս կարգի նախադրութեանց արձանագրելու իր ընդարձակ էջերուն վրայ՝ ի վերջոյ անշուշտ կատարեալ վիճակի մը մէջ առանձին ու սատկառելի հատոր մը կազմելու համար :

Վերջերս ուրախութեամբ լսեցինք Պատրիարքարանի մէկ որոշումը Կ. Պոլսոյ Զեռագիրներուն ցուցակագրութեան մասին, որոնց Տ. Յովհաննէս Ա. Քահանայ Մկրեանի յանձնուած ըլլալը գործին յաջողութեան հաստատ գրաւականն է :

Զեռագրաց մէկ մասը, որոնք զանազան ժամանակներու մէջ գրուած են, եւ

զտական բախտաւորութիւնը կ'ընծայէ մեզ ճշշելու եւ մշտնջենաւորելու Հայոց նախնի բարքերը, իրենց գրական ճաշակը, ըստ կարի գատորոշելով նաեւ անոնց ցեղային ու, քիչ մըն ալ, ազգագրական առանձին յատկանիշները որոնց մասին պէտք եղած տեղեկութիւնները չէ որ կը պակսին Ձեռագիրներու յիշատակարաններուն մէջ։ Այս դիտումներով քիչ մը աւելի յետադիմական կը գտնեմ մեր այն անտարբերութիւնը զոր ցարդ ունեցանք եւ ունինք յիշեալ ցուցակագրութեանց մասին։ Եւրոպացի հայագէտները կը գուրդուրան այն քանի մը Ձեռագիրներուն վրայ զորս ձեռք անցուցած են հիացած ու ապշած են անոնց գրչական արուեստին եւ զայն արտադրող ազգին կրօնական ոգիին վրայ։ Այս առթիւ, — թո՛ւզ հայ հնագրութեան այս վերջիններէն անհամեմատ կերպով օգտուիր, — հեւաւոր անցեալներու մէջ Եւրոպա եւ ի մասնաւորի Իտալիա դաղթելով օտար բարքերու եւ սովորութեանց մէջ անհետացող Հայոց թիւն ու ժամանակը կը ստուգուին գրեթէ հաստատ կերպով։ Եւ մինչ այսպէս պատահմամբ ու մեծ մասամբ օտարներու ձեռքով երեւան եկած յայտնութիւններ մեր անցեալին վրայ այնքան թափանցիկ լոյս մը կը սփռեն, ինչի՞ վերագրել այն անխոթութիւնը, որով մեր քովը սպասող անթիւ գրչագիրները դեռ կը թողունք փոշիներու ու ներսութեան մէջ փճանալու։

Մեր Առաջնորդներն ու Տեղապահները լաւագոյն բանը ըրած պիտի ըլլային իրենց իրաւ կամ կարծեցեալ բազմազրպտութեանը մէջ այս կարեւոր գործով զրաւելով, որ յետոյ Պատրիարքարան կրնայ զրկուիլ բանասէրներու արամազրութեանը տակ զրուելու համար։ Յետոյ, Օրացոյցի հեղինակին ու չադրութիւնը հրաւիրել կ'ուզեմ, որ եթէ այս տարի Կ. Պոլսին է նմանօրինակ նախափորձի մը կարգը, միւս տարիներ, հետզհետէ, մէկ կամ քանի մը գաւառներուն միանգամայն կրնայ ըլլալ նոյնին մէջ հիւրընկալելու բազմը, որ տարուէ տարի երեւան պիտի գան եղած պրպտումներուն շնորհիւ։ Եղած գիւտերուն թերի կամ անբաւական ըլլալը պատճառ մը չէ որ անոնք չհրատարակուին նոյն

տարուան Ընդարձակ Օրացոյցին մէջ, քանի որ այս վերջինն ալ իր կարգին կատարեալ եւ անարբազրելի հատոր մը չէ եւ իր օգուտը այն միայն պիտի ըլլայ, որ իբր գրատու մնալուն յուշարձան մը նորանոր յայտնութեանց, միայն անոնց անվթար պահպանողը պիտի ըլլար։ Ասկէ աւելի յարմար առիթը գտած ըլլալ չե՛մ կարծեր, Պատրիարքարանէն խնդրելու որ մասնաւոր շրջաբերականով մը — մէջը յատուկ հարցարաններով — գաւառներէն պահանջէր հոն գտնուած Ձեռագիրներուն ցուցակը եւ այսպէսով փճանալու կոտուտէն փրկել մեր այդ գրական գանձերը, քանի որ ո՛չ բանասիրական Հանդէս մը ունինք, որ գտնոնք հրատարակէր եւ ո՛չ ալ բանասէր-բարերարներ անոնց յաւերժացման համար։

Այս գեղեցիկ գործը խղճմտօրէն իրականացնող եկեղեցական մը, հովիւ կամ անպաշտօն հնասէր մը՝ գաւառի մը մէջ, կը հաւատեմ որ մեծ ծառայութիւն մատուցած պիտի ըլլար Հայ բանասիրութեան։ Գործին կարեւորութիւնը ի նկատ առնելով, ներկայ առաջարկս առիթ կը սեպեմ վերստին փորձելու մեր եկեղեցականութիւնը իրենց վերաբերած եկեղեցւոյն այս նուիրական բեկորները ուսումնասիրելու մէջ, յուսալով որ խոտապահանջ չեն գտներ առաջադրութիւններս, քանի որ նախնի Հայ կղերին քրտնաջան գործերուն վրայ է խնդիրը, որուն հետ իր ուզած կերպով համեմատուելու պատեհութիւնը իր ձեռքին մէջ է։

Հոս կարելի չէ չլիշել Կեսարիոյ բարեջան Առաջնորդին ջանքերը, որ թէպէտ իր երկու հրատարակութեանց մէջ անբաջալեր, այլ ինչպէս մեզ կը յայտնէ, լայն ու անխոնջ ագիով մը կազմած է ուրիշ 500ի մօտ Ձեռագիրներու ցուցակը որոնք յարմար առիթի կը սպասեն ի լոյս հանուելու համար։

Թողով սակայն պահ մը այս անհատական ջանքերը որոնց մղում տալը իւրաքանչիւր բանասէրի առանձին փափաքը պիտի ըլլայ, գործնական միջոց մը ցոյց տուած ըլլալու համար, փափաքելի էր որ Իզմիրեանց Միջանակը ընդունէր իր վարձատրութեան սահմանին մէջ նաեւ այս գործը, իբր զուտ

տոհմային հեղինակութիւն մը՝ կերպով մի չեմ կրնար մեկնել ասոր յիշեալ մրցանակէն դուրս թողուիլը : Յարգ արժանացող գործերէն քանի՜ն հրատարակուեցաւ , ժողովուրդը ի՞նչ բարոյական օգուտ քաղեց . — գրեթէ ոչինչ : Ուրեմն թո՛ղ Իզմիրեանց մրցանակարաշխու-

թիւնը քիչ մըն ալ մեր գրչագիրներու ցուցակագրութիւնը քաջալերէ , կամ եղած նուէրը ուղղակի հեղինակին տրուելու պայմանով , կամ հրատարակութեան ծախսը մատակարարելու համար :

ՍՅՆՓԱՆ ՄԵԽԹԱՐԵԱՆ .

ՕՐՈՒԱՆ ՄԱՅԵՐԸ

Գրեթէ միշտ , երոպական լրագրութեան մէջ ալ , Օրուան Մահերն են որ կը կազմեն Օրուան Կեանքի զլուրը , նուիրուած՝ անհետացող ծանօթ դէմքերու թողած տպաւորութեանը ու յիշատակին : Ու դժբաղդարար , ծանրաբեռն եղաւ Նոր Տարին սկիզբը մեր ալ օրուան կեանքին — օրուան մահերու զլուրը : Հազիւ Մամուրեանի մահը գուժող հեռագրին առաջին տպաւորութեան տակ ցաւի արտայայտութեամբ մը մամուլին յանձնած էինք Մաւսիսի նախորդ թիւը , եւ ահա՛ րսին թէ «Տիկին Տիւնարը մեռեր է» : Իր կենսագրութիւնը այնքան ճշգրիտ կերպով ու այնքան զգայուն տողերով բրաւ արդէն Արեւելք ու «Մէրսէտէս» ալ արժանաւոր յօդուած մը նուիրած է այսօր Մաւսիսի ողբացեալ հեղինակուհիին : Տիկին Տիւնարի գրական երկերը ծանօթ են ամբողջ հայ հասարակութեան , որ տասը տարիէ ի վեր , — երբ Տիկին Տիւնար ա՛լ ինքզինքը իր մայրական սուգին միայն տուած՝ մամուլին համար ինքզինքը մեռած կը նկատէր , մինչեւ իսկ իր ձեռագիրները այրելով , — կը պահէր միշտ յարգանքի ու համակրանքի անոյշ յիշատակ մը Պէշկիթաղեանի տաղանդաւոր աշակերտուհիէն , որ կին զրազէտը ճանչցուցած էր իրեն առաջին անգամ , բանաստեղծուհին որ ոտանաւորներ կը գրէր ու վէպ պիտի գրէր : Շատ քիչ են հիմա յիշողները , բայց անշուշտ կենդանի կերպով կը յիշեն , Օր. Սրբուհի Վահան , դեռ մանկամարդ աղջկի , որ երբ իր պատկառելի մօրը՝ Տիկին Նազըլ Վահանի հետ՝ կերեւնար ընկերութեան մը մէջ , զմայլանքի

մրմունջներ առաջ կը բերէր իր շուրջը՝ նոյնքան իր շնորհալի ազնուականութեամբ որքան իր կանխահաս տաղանդին համալուովը : Իր արտայայտիչ ու գեղեցիկ աչքերովը , իր սեւ գանգուր վարսերովը , իր բարեձեւ հասակովը , ուսեալ սրամիտ , խօսուէն , ու ընկերային ամէն ձիրքերով օժտուած , Օր. Սրբուհի Վահան , ճշմարտապէս «պատուաբեր անդամուհիներէն մէկն էր հայ գեղեցիկ սեռին» — բացատրութիւն մը զոր այնչափ հատարակ դարձուցին նշանուորի ու հարսնիքի ծանուցումները վերջին տարիներուս մէջ : Այդ թուականին էր որ , Պէշկիթաղեան անկողին ինկած էր , անողոք հիւանդութենէն դատապարտուած . եւ ինչպէս իր ուրիշ քանի մը անձնուէր աշակերտներն ու աշակերտուհիները , այնպէս ալ Օր. Սրբուհի Վահան կ'երթար այցելել ու մխիթարել իր հանձարեղ դատաւարակը : Օրթագիւղ , զատիվերի մը կողին վրայ , նռնենիներէ չըջապատուած , թէեւ խորխուէլ բայց կանգուն կը մնայ դեռ այն ցածուկ միայտալէն տունը , երկու պըգտիկ խուցերով , ուր կը հիւծէր բանաստեղծը եւ ուր մտնելէ չէին քաշուեր զիրք ու առնուն ունեցող անձնաւորութիւններ՝ ինչպէս պիտի ընէին հիմակուանները «Վարժապետին տունն է» ըսելով արհամարհոտ : Հոն՝ ո՛րը իր խօսքի սփոփանքը կը տանէր , ո՛րը իր նիւթական նպաստը , դեղն ու դարմանը , եւ ո՛րն ալ իր սգեւորիչ շուշը . . . :

Գրականութեան համար իր ունեցած , հակումին ու սիրոյն շափ՝ Օր. Սրբուհի Վահան սիրող էր նաեւ գեղարուեստի . չի գրուեցաւ ,

կարծեմ, թէ սքանչելապէս դաշնակ կը վար-
նէր : Ու արուեստագէտի մը՝ Տիւսար փաշայի
հետ իր ամուսնութիւնը՝ զինքը հանդիսա-
ցուց , իր յաճախած լուսագոյն բնկերութեանց
մէջ : Նոյնքան փայլուն ու յարգուած կին՝ որ-
չափ եղած էր աղջիկնութեան հասակին մէջ ,
Իր վէպէրը , Մայքան , Սիրանոյշը եւ Արաֆ-
սիան մէյմէկ յայտնութիւն եղան : «Անոց մէջ
— ինչպէս գրեց Արեւելք — հեղինակին զլուս-
ւոր քանքը եղած էր ի վեր հանել կնոջ ըն-
կերական իրաւունքները , պարզելով զազա-
փարներ՝ որոնք ժամանակին մեծ աղմուկ
հանեցին մեր գրականութեան մէջ եւ տեղի
տուին կարգ մը վիճարանութիւններու , որոնց
մէջ մասնաւորապէս պէտք է յիշել Զօհրապի
Զինկալու Նանկալանին , հրատարակուած Երկ-
րագրութեան Հանգէսին մէջ» :

Պահ մը , Տիկին Տիւսար , իր գրական
գործունէութեան միացուց կրթասիրական եւ
ուսնդ մըն ալ որ անուանական բան մը չէր ,
— լրագիրներու մէջ իր անունը հոջակուած
տեսնելու կնոջական բաղձանք մը , — այլ
իրական , արդիւնաւոր գործունէութիւն մը
որով այնքա՛ն նպաստեց Դպրոցատէր Տիկ-
նանց Ընկերութեան բարգաւաճումին , անոր
ատենագետութիւնը վարելով երեք տարի ,
անոր ի նպաստ պարահանգէսներուն կազմա-
կերպութեան ու յաջողութեան գործին մէջ
կարեւոր դեր մը ունենալով միշտ : Այդ մի-
ջոցին , չէր մոռնար նաեւ իր ծննդավայրը ,
Օրթագիւղը , Հոփիսիմեանց վարժարանը ու
րուն հիմնադիր եղած էր իր մայրը եւ ուր
դաստիարակուած էր ինքը : — Իրրեւ անձնա-
կան յիշատակ մը , կը յիշեմ քնտանեկան ցեր-
եկոյթ մը , Բարեսիրաց թատրոնին մէջ , զոր
հովանաւորեց Տիկին Տիւսար ի նպաստ
այդ դպրոցին : Յայտադիրը մեծ բան մը չէր ,
քիչ մը երաժշտութիւն ու ձեռնածուական
ներկայացում մը Սկիւտարցի հայ երիտասար-
դի մը կողմէ . . . Սէն-Ժէնէն անուն : Ա-
րեւելքի հրատարակման առջի տարին էր , ու
որչափ reportageի փափագս՝ նոյնքան , եւ
աւելի՛ , Տիկին Տիւսարը անգամ մը մօտէն
տեսնելու բաղձանքս թատրոն մղած էին զիս
կանուխէն : Եւ արդարեւ , հոն էր օրուան
գրագիտութիւն , Հոփիսիմեանցի թուրք մը սա-

նուհիներէն շրջապատուած , իր խնամոտ ձեռ-
քովր տեղաւորելով , կարգադրելով ամէն բան :
Երկչոտ կերպով մօտեցայ իրեն , ու ներկայ
օրիորդներէն մէկուն կողմէ ներկայացուելով ,
հազիւ խօսակցութեան թել մը ձեռք ձգած
էի , — որ շարունակուելով՝ պիտի յանգէր
լրագրութեան ու գրականութեան , — երբ
թեթեւ մը ուսիս զարկին : Պ. Սէն-Ժէնէն
էր , աւանդական Փռաքը հագած ու ճերմակ
փողկապը կտալով : «Կրնգհատեմ զձեզ , բայց
վայրկեանի մը համար է» ըսաւ , ու մէկ կողմ
տարաւ զիս : Ի՞նչ՝ սովորական ըսելիք կըր-
նար ունենալ ինծի այդ մարդը , որ մէկ-եր-
կու անգամ խմբագրատուն եկած էր միայն
իր ծանուցումներուն համար . այսքան էր մեր
ծանօթութիւնը : «Պիտի խնդրէի , ըսաւ դե-
րասանի ողորձ ձայնով մը ու շատ բարեկիրթ
ձեւով , ծրար մը խաղի թուղթ կարկառելով ,
որ հիմակուց թուղթ մը նշանակէք , եւ երբ
ներկայացման միջոցին , պատահարար , ձեզի
կարկառեմ այս ծրարը , նոյնը ըսէք ձեր մօտ
նստող հանդիսականներուն . . .» : Բաւական
դժուարութիւն քաշեցի ո՛չ միայն այս անհե-
թեթ առաջարկը մերժելու , այլ նաեւ օձիքս
աղատելու համար Պ. Սէն-Ժէնէնի ձեռքէն :
Երբ ձգած տեղս վերադարձայ , Տիկին Տիւ-
սարը մեկնած էր՝ նախաճաշելու համար :
Վերադարձին , ներկայացման տեսն , իր օթ-
եակը բաղմած , այցելութիւններու անվերջ
չարք մը կ'ընդունէր խնամակալուհիներու եւ
ծանօթ ազգայիններու որոնք ապահովապէս
միջոց չպիտի ձգէին սկսնակ խմբագրի մը՝
երթալ ինքն ալ մեծարանք մը նուիրել իր
կարգին : Յաջորդ օրը , այդ մաղիմէին նկա-
րագրութիւնը կ'ընէի ամէն մանրամասնու-
թեամբ , միայն թէ առանց գովեստի գտնէ
երկու բառ նուիրելու ճարտարութեանը Պ.
Սէն-Ժէնէնին որ սակայն քանիցս ծափա-
հարուած էր : Ասով կարծեցի վրէժս լուծել
իրմէ :

Այդ զիւղին մէջ՝ ուր մեծցած էր , եւ
այդ թատրոնին մէջ՝ որուն ներկայացումնե-
րուն ներկայ գտնուած էր աստեղծք , Սրբու-
հի Տիւսար՝ հիմակ կին եւ մայր՝ իր ներկա-
յութեամբը կ'արթնցնէր , այդ կիրակին , գե-
ղարուեստական ու գրական կեանքի մը սի-

րելի յիշատակները : Իր ժպիտը , զոր կը ցան
ցրէէր Հովփսիսեանցի նախկին սանուհիներուն ,
— որոնց մէջ կը գտնուէր նաեւ Ֆիմին , զոր
վաղահաս մահը խրեց մեր գրականութենէն :
— մեղաւաղութեան ստուեր մը կը ծածկէր ,
nostalgieի աննշմարելի հետք մը՝ իր ծննդա-
վայրը վերադարձող զգայուն էակի մը բոլոր
իւրփուլութեամբը : Ու իր անհետացումովը կ'ան-
հետանայ ո՛չ միայն գրագէտ կինը , այլ նաեւ
դէմք մը այն ո՛չ շատ հեռաւոր անցեալի մը
կնոջական գէմքերէն , որոնց շնորհիւ գեղեց-
կութիւնն ու արդուղարգը չէին միայն , ո
բոնք իրենց ուսման ու կրթութեան հետ ու-
նէին չես գիտեր ի՛նչ մը որ անոնց յաջորդող
սերունդին , կիներուն , աղջիկներուն մեծա-
գոյն մասին քով կը սլակի , սրտի ու հոգիի
այն տեսակ յատկութիւններ որոնք հազուա-
գիւտ կը դառնան հետզհետէ :

Տիկին Տիւսարի կեանքին վերջին տառը

տարիները սուգի ու մենակեցութեան տարի-
ներ եղան իրեն համար : Զմեռը , Բերա , իր
կրակարանին անկիւնը , եւ ամառը Այ-Սթե-
ֆանոս , իր գիւղական տանը հովանոտին
տակ , Տօրինին յիշատակովը կ'ապրէր : Ա-
նոնք որ տեսած էին երբեմն Օր. Սրբուհի
Վահանը , ծաղկատի ու զուարթ , ու յետոյ
մանկամարդ Տիկին Սրբուհի Տիւսարը , աչ-
խոյժ , եռանդուն , չէին կրնար առանց դառն
տալաւորութեան մը տեսնել հիմակ դժբաղդ
մայրը , ցաւատանջ դէմքով ու իր սուգին տակ
ընկճուած , որուն միակ ախտիւնքն էր իր
աղջկան գերեզմանին այցելութեան երթալ ,
ինքն ալ հոն , անոր քովիլը հանգչելու ա-
ճապարանքով , մինչեւ որ հասաւ իր այս
տխուր խռէպին , երկարատեւ ու տառա-
պագին հիւանդութենէ մը ետքը :

Տ. Ա.

ՎԱՍՄԻՍԻ ՅՈՒՇԱՏԵՏՐԸ

Ծնունդի օճին առթիւ պաշտօնական քն-
դանելութիւնները կատարուեցան կիրակի օրը ,
Պատրիարքարանի մէջ , ուր ներկայ էին ժո-
ղովականներ , ազգ. դանազան հաստատու-
թեանց ներկայացուցիչներ , եկեղեցական ու
աշխարհական դատէն : Նախ Յ. Գուրգէն Էֆ.
եւ յետոյ Տիգրան Էֆ. Եւսուֆեան բանա-
խօսութիւններ արտասանեցին , որոնց պա-
տասխանեց Ս. Պատրիարք Հայրը՝ փոխա-
դարձաբար շնորհաւորելով ներկաները , եւ
Պատրիարքարանի ու վարչական գործոց վրայ
մասնաւորապէս որբախնամ գործին վրայ ,
տեսութիւն մը ընելով : Ն. Սրբազնութիւնը
ի վերջոյ բարեմաղթութիւններ բրաւ վէհէ՝
Ստլթանին արեւադարձութեան համար , որոնց
ձայնակեցան բոլոր ներկաները :

Պայքամի օճին առթիւ Ս. Պատրիարքը
իր հետն ունենալով Ա. Գործակատար Տէր-
Ներսէսեան Տիգրան Էֆ.ն՝ երեքշաբթի օրը
Կայս . Պալատ գնաց յանուն Ազգին շնորհա-
ւորութիւններ մատուցանելու յոսոս Կայս .
Գահոյից : Յետոյ այցելեց աւագանիին ու նա-
խարարներուն : Այցելեց նաեւ Պարսից դես-
պանին եւ իր շնորհաւորութեանց հետ՝ շնոր
հակալութիւն յայտնեց Վեհ. Շահին կողմէ

իրեն նուիրուած Ա. կարգի «Առիւծ եւ Արեւ»
պատուանշանին համար :

Յաւակցակցն այցելութիւն տուաւ Ս.
Պատրիարք Հայրը , չորեքշաբթի իրիկուն ,
Անգլ. դեսպան Սըր Նիքօլաս Օ'Քոննըրի ,
Վիգթորիա Թագուհին մահուան առթիւ :

Ոսկի գրիչ մը նուիրուեք է Արամ Անտոն-
եանին , — ինչպէս կը կարգանք Արեւելքի մէջ ,
— երիտասարդ հրապարակագրին գրուած քնե-
րուն համակրողի մը կողմէ որ անձանօթ մը-
նալ կ'ուզէ : Սիրուն գաղափարի մը գործա-
դրութիւնն է ասիկա , նոյնչափ դնահատելի՝
որչափ որ օրինակները հազուադէպ են մեր
մէջ : Կը խնդակցինք մեր բարեկամին եղած
այս նուէրին համար՝ որ իր նիւթական արժէ-
քէն տեղի՝ բարոյական նշանակութիւն մը
ունի :


Արժօնատէր Կ. Ս. Իւթիւժեան

Տպագրութիւն Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Կ. Պոլիս , Ֆինանսըրար եօզուշու , Թիւ 27

ԸՆՏԻՐ, ՀՈՏԱԻԷՏ, ԽՆԱՅՈՂԱԿԱՆ

ԹԵՅ



ԹԵՅ

ԹԵՅ

ԹԵՅ

ԹԵՅ

ԹԵՅ

Ամէն տեսակ թէյերու նոր բերքերէն մեծ քանակութեամբ հասած է ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը : Թէյի սիրահարներն ու ամէնէն փափկաճաշակներն իսկ վերջին ծայր գոհ պիտի մնան այս թարմ թէյերէն : որոնք ընտիր, առողջապահիկ եւ հոտաւէտ բլլալով հանդերձ՝ անմրցելի ըսուելու աստիճան տաճն են :

Գաւառներու յաճախորդք թէյ գնելու համար պէտք չունին անձամբ գալու : նամա-

կով թող զիմեն ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատան, ուր ամենամեծ խնամով, զգուշաւորութեամբ կը գործադրուին ամէն կարգի յանձնարարութիւնք՝ մեծաքանակ եւ փոքրաքանակ : Դիւրութեան համար՝ թէյերուն փոխարէնը կարելի է վճարել նաեւ երբ ապրանքները բեռցուին ու խնամքով ներկայացուի գնողին : Կեղծ թէյ չգնելու համար հաճեցէք ուշադրութիւն ընել վերի մարքային եւ ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ անուանք : Կեդրոնատեղին՝ Կ. Պոլիս, Պահէճ Գարու, Ճէլալ Պէյ խանի կից, թիւ 10, Կ. Եաւրուեան Յ. Իսագուլեան մեծ վաճառատունը :

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1884

ՀԱՆՐԱԾԱՆՈԹ

ՇԱՊԻԿԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ

Մ. ՏԵՐ-ԴԱԻԻԹԵԱՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1884

Թիւ 21, Ղալաթիա, Վոյվոսա փողոց, Գաղղիական նամակասան դէմ

Խիստ տաճն զինքնով կը ծախէ Ֆլանէլ, լեթան եւ բիքէ չապիկներ, փողկապ, օձիք : թեւնոց, կոճակ (տակեզօճեալ ու պարզ), գուլպայ, թաշկինակ, զմեղի, խոզանակ, սանտր ու անուշահոտութեանց ամենաընտիր տեսակներ :

Միշտ խնամով ու զիւրամատչելի գինքնով կը պատրաստէ նաեւ չափու վրայ ամէն տեսակ չապիկ, գիշերազգեստ, օձիք, թեւնոց, ու կը կատարէ ներքին ճերմակեղինաց յանձնարարութիւններ :

Հանրածանօթ Մ. ՏԵՐ ԴԱԻԻԹԵԱՆ չապիկի գործարանը նորաձեւութեան յանձնարարութեանց խնամով պատրաստութեան ու գինքնով տարապայման աճանութեան տեսակէտով վստահելի ու լաւ յանձնարարելի տուն մըն է :

6-15



ՌՕՍԻԱ — ROSSIA



Ա.ՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիներ

34,775,642 Ֆրանք

Երաշխաւորութեան գումար

121,765,333 »

1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած

164,172,000 »

Կեդրոնացեղի, Ղալաթիոյ Բարափին վրայ, Մախսան հին տեղը

Ընդհ. Բնակչ.

Ընդհ. Գործակալ

Ա. ՀԻԻՐՄԻԻԶ

ԹԷՈՏՈՐ ՌԷԲԵՆ

THE GRESHAM

ԿՐԷՇԱՄ

ԱՆԳՂԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԿԵԱՆՔԻ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ՀԻՄՆՈՒՍԾ Ի ԼՈՆՏՈՆ

1848 ԻՆ

Դրամագլուխ եւ երաւխաւորութեան գումար աւելի քան 175,000,000 Ֆրանկ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԿԿԱՅՈՑՈՒՑԻՉԲ ԷՏՈՒՐՏՍՍ ԵՒ ՈՐԴԻ

Ալալմմի խան, Կ. Պոլիս:

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1852

ՏԲԹ. Ա. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

ԱՄԵՐԻԿԵԱՆ — ԱՏԱՄՆԱԲՈՅԺԲ

396. ՄԵԾ ՓՈՂՈՑ ԲԵՐԱ. 396

(Նաննի գաւեքաւան վրայի յարկը, ճիշդ Զրպուհեանց դեմը)

Կատարելագործեալ գործիքներու միջոցաւ ամենատարիկ ցաւած ախտները մեկ անգամ քակեն կը լեցնեն. ցաւով դիմելու եւ բուժուած վերադառնալու պայմանաւ:

Նորահար եղանակաւ, նորը, ճաշակատար եւ զխմելուն արհեստական ախտներ կը պատրաստեն, յար եւ նման բնականի. դիմիք ձեւաւորութիւն լոս սարիքի, ծամողութիւն եւ ազաւ արտասանութիւն երաշխաւորուած:

Բերնի հիւանդութիւնք կատարելագէտ կը բուժուին ինչպէս նաեւ թմրեցուցիչ դեղերու եւ ամենակատարելագործեալ աքցաններու միջոցաւ, առանց ցաւի ատամնահանութիւն:

Յ. Գ. Զմեռները կիրակի օրերն ալ (մինչեւ կես օր) ինչպէս նաեւ ամէն օր (մինչեւ կես զիշեր) հիւանդ կ'ընդունին:

Ծանօթ. — Պոլսոյ կողմը մասնաճիւղ ԶՈՒՆԻՆՔ.

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՏՈՔԹ. Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵԾ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 200

Կալաթա-Սերայի Լիսին դեմ

Ամէն օր ժամը 5—11 (Ը. Թ.).

Կիրակի օրերը ժամադրութեամբ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ ՏՊԱՐԱՆԻՆ մէջ գործ կայ երկու ատաջնակարգ գրաչարի համար որոնք հայերէնէ զատ քաջավարժ ըլլան նաեւ ֆրանսերէն շարելու մէջ: Անօգուտ է ներկայանալ առանց լաւագոյն յանձնարարականի:

ՆԱՏԻՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆ

ՆԱՏԻՐ լուսանկարչատունը այս անգամ փոխադրուած է Բերա, Կալաթա-Սերայի կից, թիւ 255, ուր խիստ զիւրաժատչելի գներով ամէն տեսակ լուսանկարներ կը պատրաստուին:

2—3

ԲԱՌԱՑՈՒՅԱԿ ԱԽՏԱՆՈՒԱՆՑ

ՖՐԱՆՍԵՐԷՆԷ Ի ՀԱՅ

Բ. սպագրութիւն՝ սրբագրուած ու նոխացած

Աշխատասիրեց

ՏՈՔԹ. Ն. ՏԱՂԱԽԱՐԵԱՆ

Կը պարունակէ աւելի քան 1350 բառ ուրոնց իրր 350ը աշխատասիրողին յօրինածներն են: Դին 3 զրուշ: Վաճառման կեդրոնատեղիներն են՝ Պոլիս, Մարգարեան գրավաճառանոցը եւ Բերա, Վէյսի գրավաճառանոցը:

3—4